ԿԱՐԾԻՔ

Սոնա Միսակի Մխիթարյանի՝ «ԵՄ Արեվելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ԻԳ. 00. 02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Շատ մասնագետների և պրակտիկ քաղաքական գործիչների կարծիքով՝ ԵՄ քաղաքական համակարգը գերծանրաբեռնված է բյուրոկրատական կառույցներով, որոնց մի մասն ունի զուտ սիմվոլիկ բնույթ և կոնկրետ քաղաքական հարցեր չի լուծում: Համապատասխանաբար, ատենախոսության թեման ենթադրում է երկու կարևոր հարց:

Առաջինը. ինչպիսի՞ն է համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների ազդեցությունը ԵՄ արտաքին քաղաքականության վրա: Արդյո՞ք համաեվրոպական կուսակցություններն այդպիսի կառույցներից չեն, որոնք պետք է դասել ավելի շատ պայմանական, քան իրական գործոններ ԵՄ արտաքին քաղաքականության ոլորտում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ իրենց անդամակցում են ազգային կուսակցություններ և կարող են արդեն իսկ ազդել իրենց պետությունների քաղաքականության վրա՝ ԵՄ կազմում: Բացի այդ, ինչպես նշում է ատենախոսը էջ 23-ում, համաեվրոպական կուսակցությունները հարնային պահանջի արդյունքում չեն ձևավորվել, չունեն սեփական մեդիա-ռեսուրսներ՝ օգտվելով ազգային կուսակցությունների ռեսուրսներից, բայց ազգային կուսակցությունների հետ համեմատ ունեն ավելի ցածր կազմակերպական մակարդակ (էջ 24): Կարևորագույն հարցերից է. համաեվրոպական կուսակցություններն ինչպիսի՞ կոնկրետ քաղաքական արդյունքներ են տալիս, որոնք չեն տալիս ԵՄ այլ կառույցներ: Սրանից է կախված համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսի դերն ու նշանակությունը, կամ դրա բացակայությունը:

Այս հարցին հեղինակը պատասխանում է, օրինակ՝ նշելով, որ «համաեվրոպական կուսակցությունները կարող են ազդեցություն ունենալ Եվրոպական խորհրդի որոշումների վրա, երբ մեկ առանձին կուսակցության քաղաքական առաջնորդներն իրենց ներկայացվածությամբ/թվաքանակով ավելի շատ են, քան այլ կուսակցության առաջնորդները» (24): Բացի այդ, հեղինակը նշում է, որ համաեվրոպական ամենախոշոր կուսակցություններն աջակցում են ԵՄ-ՆԱՏՕ փոխհարաբերություններին և ներեվրոպական ազատական օրակարգին (մարդու իրավունքների պաշտպանություն, և այլն, էջ 26): Բայց

դարձյալ՝ արդյո՞ք ԵՄ քաղաքականությունն էապես այլ կլիներ, եթե չլիներ համաեվրոպական կուսակցությունների գործունեությունը:

Ատենախոսության 1.2. ենթագլուխը («Համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դերը ԵՄ արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացներում») նվիրված է հենց այդ հարցին: Վերլուծությունից երևում է, որ համաեվրոպական կուսակցությունների գործելակերպն ավելի շատ է կախված ԵՄ քաղաքականությունից, քան թե հակառակը. «Եթե համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունն ունի եվրոպամետ դիրքորոշում, ապա այն ավելի հակված է աջակցել ԵՄ գործադիր թևի կողմից առաջ տարվող արտաքին և անվտանգային քաղաքականությանը և ընդհակառակը» (Ատենախոսություն, էջ 33): Համաեվրոպական կուսակցությունների ազդեցությունը ԵՄ քաղաքականության վրա սահմանվում է որպես «**հոետորական դիվանագիտություն.** նրանք իրենց տրամադրության տակ ունեն հոետորական դիվանագիտության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են երկխոսությունն ու բանավեճը» (էջ 34):

Պատահական չէ, որ, ինչպես նշում է հեղինակը՝ խոսելով ուկրաինական ճգնաժամի մասին, «ԵՄ գործադիր թևն ավելի ակտիվ ներգրավվածություն ունեցավ, քան համաեվրոպական կուսակցություններն ու ԵԽ քաղաքական խմբակցությունները, և վերջիններս ներգրավվեցին ԵՄ-Ուկրաինա արտաքին քաղաքական գործընթացի մեջ, երբ կարևոր որոշումներն արդեն կայացվել էին» (Ատենախոսություն, էջ 37): Այլ կերպ ասած, համաեվրոպական կուսակցությունների դիրքորոշումը ԵՄ քաղաքականության վերաբերյալ այդ քաղաքականության թչ թե պատճառնեն և ազդեցության գործոնը, այլ զուտ արձանագրումը, բյուրոկրատական համակարգի լրացուցիչ ծանրաբեռնումն ու բանավեճային ֆոնի ապահովումը:

Հեղինակը նույնպես անում է այն եզրակացությունը, որ «համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դերը ԵՄ արտաքին քաղաքականության մշակման և իրագործման հարցում որոշիչ չէ» (Ատենախոսություն, էջ 39): Սրանից, համապատասխանաբար, պետք է բխի այն, որ **համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսների ուսումնասիրությանը պետք է հատկացվի ոչ թե առաջնային, այլ երկրորդական, ածանցյալ դեր:**

Երկրորդ հարցը, որը բխում է ատենախոսության թեմայից, այն է, թե ինչպիսի՞ն է համաեվրոպական խորհրդարանական և հայաստանյան կուսակցությունների փոխհարաբերությունների ազդեցությունը ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների վրա: Եթե համաեվրոպական և հայաստանյան կուսակցությունների փոխհարաբերությունները նույնպես զուտ սիմվոլիկ են, հայտարարված և կոնկրետ բովանդակություն չստացած, ապա

դարձյալ՝ իրենց նմանատիպ փոխազդեցությունից որևէ ակնկալիք չի կարող լինել, այդ թվում՝ ԵՄ արտաքին քաղաքականության վրա հայամետ ազդեցության առումով: Այս կապակցությամբ հեղինակը նշում է, որ «Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշնակցությունը, «Բարգավաճ Հայաստան»-ը և այլ կուսակցություններ նույնպես ԱԼԳ ծրագրի զարգացման ժամանակաշրջանում հաստատել են քաղաքական համագործակցություն համաեվրոպական գործընկերների հետ» (Ատենախոսություն, էջ 55): Չնայած որ հեղինակը բերում է համաեվրոպական կուսակցությունների և հայաստանյան կուսակցությունների միջև համագործակցության մասին աղյուսակը (2, էջ 126-127) և վերլուծում է Հայաստանին ուղղված համաեվրոպական կուսակցությունների ներկայացուցիչների աջակցող, հորդորող, տեղեկացնող ելույթները, այդ թվում՝ Հայաստան կատարված այցերի ժամանակ, այնուամենայնիվ հակառակ ազդեցությունը չի ուսումնասիրվում: Դա թույլ չի տալիս հասկանալ, թե որքանով է Հայաստանը ի դեմս իր քաղաքական կուսակցությունների մասնակցել/ազդել համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսի վրա՝ Արևելյան գործընկերության և զուտ հայաստանյան քաղաքական օրակարգի վրա:

Ատենախոսությունն ունի արժեքավոր կողմեր, այդ թվում.

1. համաեվրոպական կուսակցությունների արտաքին քաղաքական գործունեության երկու հարթությունների առանձնացումը՝ միջկուսակցական և միջինստիտուցիոնալ մրցակցության. «Առաջին դեպքում համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունները մրցակցում են սեփական արտաքին քաղաքական դիրքորոշումները լսելի և առաջնային դարձնելու համար, իսկ երկրորդ դեպքում՝ արդեն որպես ԵԽ քաղաքական խմբակցության տարրեր ձգտում են ԵՄ որոշումների կայացման համակարգում ազդեցություն ձեռք բերել: Սակայն եթե առաջին հարթակում համաեվրոպական կուսակցությունները սովորաբար ընտրում են առճակատման և թեժ բանավեճերի տարբերակը, ապա երկրորդ դեպքում, հաշվի առնելով, որ բաց առճակատումը կարող է վնասել ԵՄ հանրային և միջազգային իմիջին, կուսակցությունները հիմնականում նախընտրում են կառուցողական քննադատության և երկխոսության ճանապարհը» (էջ 39):

2. Արժեքավոր է նաև հեղինակի եզրակացությունն այն մասին, որ «համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների արտաքին քաղաքական գործունեության մեջ կարելի է տարբերակել երկու տեսակի գործիքակազմ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ: Առաջինը վերաբերում է կուսակցությունների՝ ԵՄ քաղաքական համակարգի ներսում օրենսդրական ու իրավական գործառույթներին և հնարավորություններին, իսկ

երկրորդը կարող է ներառել լոբբինգ, անձնական կապերի օգտագործում, հանրային օրակարգերի ձևավորում, տեղեկատվության հավաքագրում ու տարածում և այլն» (էջ 40):

3. Արևելյան գործընկերության ծրագրի ոչ միայն դրական, այլև բացասական կողմերի, դրսևորումների քննարկումը (Ատենախոսություն, էջ 45-49), ներառյալ անվտանգային մոտեցումների բացակայությունը, որը դրսևորվեց նաև ԼՂ 44-օրյա պատերազմի հետ կապված:

4. Համաեվրոպական կուսակցությունների ներկայացուցիչների կողմից բազում հայտարարությունների, ելույթների, քննարկումների բովանդակային /կոնտենտ/ վերլուծությունը:

5. Քանի որ ատենախոսությունը պաշտպանվում է Հայաստանի քաղաքական իրականության պայմաններում և պետք է նպաստի ՀՀ շահերին, նյութի առավել կարևոր մասերից ենք համարում ենթագլուխ 3.3 Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների «Արևելյան գործընկերություն» ծրագրի շուրջ դիսկուրսում (էջ 113): Վերլուծված նյութի էական մասը կազմում են այսպես կոչված «մտավախությունները» և «կոչերը համակամտության երկու կողմերին», որոնք այդքան վրդովեցրել են հայաստանյան հասարակությանը, այդ թվում՝ 2020թ. պատերազմի ընթացքում և դրանից հետո: Փաստորեն հեղինակը նույնպես ցույց է տալիս, որ համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսը հաճախ ինքնանպատակ է եղել և որևէ գործիքային նշանակություն՝ բացի սիմվոլիկ դերակատարումից, չի ունեցել: Նույն կերպով որևէ ազդեցություն չեն ունեցել համաեվրոպական կուսակցությունների քննադատություններն Ադրբեջանում մարդու իրավունքների, ժողովրդավարության սկզբունքների մշտական խախտումների վերաբերյալ (էջ 119), ինչպես նաև Արցախի բնակչության իրավունքների պաշտպանության կոչերը (էջ 124):

6. Վերլուծության արդյունքների ամփոփումն աղյուսակ 3-ում, որտեղ երևում են համաեվրոպական կուսակցությունների՝ Արևելյան գործընկերությանը վերաբերող բանալի մոտեցումներն ու կողմորոշումները (էջ 142-144):

Թերություններից են.

1. Քանի որ համաեվրոպական կուսակցությունների ուսումնասիրվող դիսկուրսը վերաբերում է «Արևելյան գործընկերությանը», այն է՝ ԵՄ և մի շարք հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ Հայաստանի հետ փոխհարաբերություններին, ենթադրվում է, որ դիսկուրսի տարրերը կարող են արտացոլվել նաև հայաստանյան և համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների միջև դիսկուրսում: Ցավոք, դիսկուրսի այդ մասն ուսումնասիրված չէ:

2. Ատենախոսության մեթոդական մասում ներկայացված չէ, թե ինչ սկզբունքներով և ընթացարգերով է իրականացվել դիսկուրս-վերլուծությունը: Մինչդեռ, վերծուծվել է մեծ ծավալի և տևական ժամանակահատվածի նյութ, և այն վերլուծելիս դիսկուրս-վերլուծության ընթացակարգերի կիրառումը կօգներ կանոնակարգված ցուցադրել դիսկուրսի բոլոր կողմերին, դինամիկան, կոնֆլիկտայնությունը, շահերի հնարավոր բախումները, և այլն:

3. Հեղինակն իրականացրել է 7 փորձագիտական հարցազրույցներ տարբեր համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչների, ԵԽ քաղաքական խմբակցությունների պատգամավորների և փորձագետների հետ, ինչն ատենախոսական հետազոտության առավելություններից է: Իսկ ինչու՞ չեն իրականացվել նման փորձագիտական հարցազրույցներ ՀՀ այն քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ, որոնք համագործակցում են համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների հետ, որպեսզի գնահատվի այդ դիսկուրսի արդյունավետության աստիճանը. չէ՞ որ այդ համագործակցությունն երկկողմանի էր, ուստի և դրա գնահատումը նույնպես պետք է երկկողմանի լինի:

4. Կոնտենտ-վերլուծության և փորձագիտական հարցազրույցների միջոցով հետաքրքիր կլիներ պարզել նաև այն, թե ինչպիսի մասնակցություն են ունեցել Ադրբեջանի քաղաքական կուսակցությունները համաեվրոպական կուսակցությունների հետ դիսկուրսում, այդ թվում՝ Հայաստանի և Արցախի հարցերի վերաբերյալ, ինչ գործիքներից են օգտվել, ինչպես են ներազդել: Սա կարող էր ուսանելի լինել հայաստանյան կուսակցությունների համար՝ ԵՄ կառույցների հետ առնչություններում:

Այսպիսով՝ ատենախոսության արդյունքում բացահայտվում են համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսի կառուցվածքը, առանձնահատկությունները, գաղափարա-խոսական և արժեքային հիմքերը: Միևնույն ժամանակ, վերահաստատվում է այն տեսակետը, որ ԵՄ քաղաքական համակարգը գերծանրաբեռնված է ոչ միշտ իրական ազդեցություն ունեցող կառույցներով, որոնցից են փաստորեն համաեվրոպական կուսակցությունները: Այս իմաստով համաեվրոպական կուսակցությունների գործունեության և դիսկուրսի ուսումնասիրությունն արժեքավոր է այնքանով, որ պետք է ընկալվի որպես ԵՄ ներքին և արտաքին քաղաքականության քննարկումների հարթակներից մեկը, այդ քաղաքականությունը հասկանալու միջոցներից մեկը: Միևնույն ժամանակ, այդ հարթակին չպետք է վերագրել իրական ազդեցություն ԵՄ արտաքին քաղաքականության վրա:

Չնայած նշված թերությունների՝ ատենախոսության մեջ կարևոր ոլորտային հիմնախնդիրների բարձրացումը և ուսումնասիրությունը, դրանց լուծմանն ուղղված

մասնագիտական ջանքերն ու ստացված արդյունքները հիմք են՝ կատարված աշխատանքի գնահատման համար: Հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով՝ ատենախոսության մեջ արծարծվող հիմնախնդիրների վերլուծության և լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Ս. Մ. Մխիթարյանը՝ ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

23.08.2024 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ Գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Վ. Հովհաննիսյան